Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունվարի 29-ի N 54 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային ծառայության (այսուհետ՝ մաքսային ծառայություն) և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն) միջև՝ պարտապանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող գույքի վերաբերյալ էլեկտրոնային եղանակով տեղեկությունների փոխանակման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հարկադիր կատարման ծառայության կողմից պարտապանի առկա և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա արգելանք դնելու, պարտապանի գույքի վրա դրված արգելանքը վերացնելու և գործարքը թույլատրելու, ինչպես նաև պարտապանի կողմից իրականացվող որոշակի գործարք թույլատրելու մասին որոշումները մաքսային ծառայություն են ուղարկվում մաքսային ծառայությունում ներդրված համապատասխան ծրագրի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով:

3. Մաքսային ծառայության կողմից պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման կատարման վերաբերյալ ծանուցումները հարկադիր կատարման ծառա-

յություն են ուղարկվում մաքսային ծառայությունում ներդրված համապատասխան ծրագրի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով:

4. Էլեկտրոնային փաստաթղթերի պաշտպանությունն ու նույնականացումն ապահովվում են մաքսային ծառայության և հարկադիր կատարման ծառայության միջև կազմակերպված փակ, առանձնացված հատուկ կապուղու միջոցով:

5. Ուղարկվող և ստացվող տեղեկությունները պահպանվում են մաքսային ծառայության և հարկադիր կատարման ծառայության տվյալների շտեմարաններում: Հարկադիր կատարման ծառայության կառավարման էլեկտրոնային համակարգից պարտապանի առկա և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա արգելանք դնելու, պարտապանի գույքի վրա դրված արգելանքը վերացնելու և գործարքը թույլատրելու, ինչպես նաև պարտապանի կողմից իրականացվող որոշակի գործարք թույլատրելու մասին որոշումները և պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման կատարման վերաբերյալ ծանուցումները կարող են արտաբերվել ու տպագրվել հարկադիր կատարման ծառայության համակարգից՝ տպագրական ձևերին համապատասխան:

6. Հարկադիր կատարման ծառայության կողմից արգելանք դրվելու հետևանքով կասեցված գործարքի հետագա մաքսային ձևակերպումները թույլատրելու մասին որոշման ընդունման դեպքում մաքսային ծառայություն է ուղարկվում գործարքը թույլատրելու վերաբերյալ հաղորդագրություն:

7. Հարկադիր կատարման ծառայության և մաքսային ծառայության միջև տեղեկատվությունը փոխանակվում է իրական ժամանակում:

8. Հարկադիր կատարման ծառայությունը և մաքսային ծառայությունն ապահովում են տեղեկատվության անվտանգ փոխանակումը, ստացված տեղեկության նպատակային օգտագործումը, ինչպես նաև գաղտնիությունը՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ